ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի մարտի 19-21-ը Ամերիկայի Միացյալ Նահանգներ (մայրաքաղաք Վաշինգտոն) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**

Քրիստինե Ղալեչյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ մայրաքաղաք Վաշինգտոն, 2024թ. մարտի 19-21-ը

4. **Հրավիրող կողմը.**

Համաշխարհային Բանկ

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցություն Համաշխարհային բանկի և Համաշխարհային ռեսուրսների ինստիտուտի «Ross» կայուն քաղաքների կենտրոնի կողմից 2024 թվականի մարտի 19-21-ը ԱՄՆ մայրաքաղաք Վաշինգտոնում կազմակերպած «Transforming Transportation» խորագրով 21-րդ ամենամյա համաժողովին:

6. **Քննարկված թեմաները.**

Ամերիկայի Միացյալ Նահանգների մայրաքաղաք Վաշինգտոնում կայացած՝ Համաշխարհային բանկի և Համաշխարհային ռեսուրսների ինստիտուտի «Ross» կայուն քաղաքների կենտրոնի կողմից կազմակերպած «Transforming Transportation» խորագրով 21-րդ ամենամյա համաժողովին քննարկվել է հետևյալ՝ «Տրանսպորտի ճկունության և հարմարվողականության համար ֆինանսավորման մեծացում և մեղմացման ֆինանսավորման մեջ հարմարվողականության ինտեգրում» խորագրով թեման, որը նվիրված է զարգացող երկրներում տրանսպորտային լուծումների խթանմանը, որոնք ուղղված են ինչպես կլիմայի, այնպես էլ զարգացման նպատակներին:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Համաժողովի շրջանակներում քննարկվել են Համաշխարհային բանկի՝ Ճանապարհային անվտանգության գլոբալ հիմնադրամի կողմից իրականացված մի շարք նիստեր, որոնք ուղղված էին ճանապարհային անվտանգությանը:

Միաժամանակ 2024 թվականի մարտի 20-ին տեղի է ունեցել «Ճանապարհային անվտանգության ոլորտում ներդրումներ կատարելու օգուտները» խորագրով առանձին նիստ: 2024 թվականի մարտի 21-ին՝ Անվտանգ արագությունների կառավարման գլոբալ ուղեցույցի ներկայացում, իսկ 2024 թվականի մարտի 21-ին՝ ՀԲ-ի, Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) և Ճանապարհային անվտանգության համաշխարհային հաստատության (GRSF) կողմից Ճանապարհային անվտանգության առաջատար գործակալությունների համար կազմակերպվել էր փակ կլոր սեղանի հանդիպումը: Կլոր սեղանի ընթացքում աշխարհի տարբեր երկրների և տարածաշրջանների Ճանապարհային անվտանգության առաջատար գործակալությունների ղեկավարները հնարավորություն ունեցան քննարկելու գործակալության գործառույթները և իրենց մանդատի իրականացման հետ կապված մարտահրավերները և ներկայացվեցին լուծումներ գործընկերներին, ինչպես նաև ՀԲ-ի, ԱՀԿ և Ճանապարհային անվտանգության համաշխարհային հաստատության (GRSF) ներկայացուցիչներին:

Աշխատաժողովների, պանելային քննարկումների շրջանակներում ներկայացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ոլորտում իրականացվող քաղաքականությունը, Ճանապարհային անվտանգության ազգային ռազմավարության նախագիծը և գործողությունների պլանը: Քննարկվել են նաև ՄԱԿ-ի «Անվտանգ մոտեցում» համակարգի ներդրման նպատակով իրականացվող բարեփոխումները, որոնք պետք է ապահովեն համակարգի հինգ հենասյուների և ռազմավարական զարգացման նպատակների և սկզբունքների իրականացումը: Անդրադարձ է արվել Հայաստանում ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգությունը բարելավելու հրամայականին, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների աջակցությամբ ՀՀ-

ում ճանապարհային անվտանգությանն առնչվող սոցիալական, կրթական և հանրային իրազեկման միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտությանը:

Համաժողովի ընթացքում քննարկվեց ՀԲ և ԱՀԿ անդամ երկրների Ճանապարհային անվտանգության ոլորտում առկա փորձը, մարտահրավերները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հետ ճանապարհային անվտանգության բնագավառում սերտ համագործակցելու հեռանկարները: Վերոգրյալի արդյունքում, Հայաստանը հրավիրվեց մասնակցելու 2025թ. Ճանապարհային անվտանգության 4-րդ Գլոբալ Նախարարական Համաժողովին (4th Global Ministerial Conference on Road Safety) և հանդես գալ զեկույցով:

Առանձին հանդիպումներ են տեղի ունեցել ճանապարհային անվտանգության առաջատար փորձագետների հետ, որի ընթացքում փորձագիտական խորհրդատվություն է մատուցվել կոնկրետ հարցերի շրջանակի վերաբերյալ (ճանապարհային անվտանգության տվյալների կառավարման ժամանակակից համակարգերի ներդրում, ճանապարհային անվտանգության կառավարման հաջողված մոդել և ինստիտուցիանալ շրջանակ, կարողությունների շարունակական զարգացում, հանրային վարքաբանության փոփոխություն և այլն):

Մասնակցելով «Կայուն տրանսպորտային համակարգ» խորագրով պանելային քննարկմանը, ներկայացվել է կլիմայի փոփոխության նկատմամբ Հայաստանում տրանսպորտային ենթակառուցվածքի խոցելիությունը և առկա ու ապագա մարտահրավերները: Շեշտադրվել է կանխարգելող քաղաքականություն որդեգրելու մեր տեսլականը և իրականացվող ծրագրերը, դրանց արդյունքները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության հաջողված փորձը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այցի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Համաշխարհային բանկի՝ Ճանապարհային անվտանգության գլոբալ հիմնադրամը խոստացավ աջակցություն ցուցաբերել Հայաստանին՝ առանձին միջոցառումների, բարեփոխումների շարունակական իրականացման, կարողությունների բարձրացման հարցում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

28.03.2024թ.